



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Handwritten text at the top of the page, possibly a library or collection mark.

Թի 48

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ՔԱՌԱՍՈՒՆԵՒՈՒԹԵՐՈՐԻ

7 ՅՈՒԼԻՍ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Յ. ԳԻՐԲԻՆԱՆ

— 1872 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԽԸ

ՆՅՈՒՆ 1872

ՆԱԽԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՂՈՂԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. (Առ ժամանակեայ կարգեալ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Վաւերացումն ընտրութեան Ազգ. Վարչո թեան Քաղ. Ժողովոյ :
- 2° Ընտրութիւն նորոգ Դիւանի Ընդհ. Ժողովոյ :
- 3° Կոնդակ Վեհ. Կաթողիկոսի :
- 4° Ատենական Կանոնադրութիւն :
- 5° Կաթողիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնք :
- 6° Հարցումն ինն երեսփոխանաց :

Ժամը 8^{րդ} հասած էր եւ ժողովոյ Ատենապետներէն ոչ ոք ներկայացած չէր Պատրիարքական հրամանաւ առ ժամանակեայ կերպիւ Ատենապետի աթոռն անցաւ Ղաղարոսեան Ք. Է. Բ. եւ ատենաւ բացաւ Դիւանակազմութեան 44 երեսփոխանաց՝ որոց թիւն Դիւանակազմի հազիւ 19 ի հասնելով մեծագոյն մաս չգոյա ուց :

Ատենապետ էֆ. Դիւանին հաղորդեալ օրինական պատճառաւ բացակայութիւնները հրատարակելէ ետեւ խմացուց ժողովոյն թէ եկեղեցական երեսփոխաններէն Տ. Խորէն Քահանայ Փէշիվանեան՝ Իսկիւտարի ազգականց վարժարանին մէջ ամենօրեայ դասախօսութեան պաշտօն ստանձնած ըլլալուն պատճառաւ երեսփոխանական պաշտօնէն հրաժեշտ անուստիպուած եւ ըստ այնմ հրաժարագիր մատուէ Բայց կը յարէ թէ ըստ որում ներկայից

թիւը դեռ եւս մեծագոյն մաս չկազմէր ոչ յիշեալ Տ. Խորէն Քահանայի իրաւարարը կըրնայ ընդունելութեան գոյիլ եւ ոչ ալ Քաղ. Ժողովոյ նորոգ ընտրութեան վաւերացումն որ խնդրոց կարգին մէջ առաջինն եւ ստիպողականն է, ժողովոյն ներկայացել՝ ուստի եւ այն անմիջապէս որոշելի խնդիրները մէկտէլ թողլով մի՞նք բանելի խնդրոց վրայ կը հրաւրելիք երեսփոխանաց ուշադրութիւնն եւ կառավարիչ որ ժողովն անօնց է մին ընտրէ :

Ժողովը կը հաւանի Ս. Նախագահին յայտնած բազմանաց համեմատ Վեհ. Կաթողիկոսի կողմէն վրայ վիճարանիլ, այն թէն թեմաւ սակայն որ եթէ մեծագոյն մաս գոյանայ անմիջապէս վիճարանութիւնն ընդհատելով Քաղ. Ժողովոյ ընտրութեան վաւերացումն իբրեւ ըստիպողականագոյն խնդիր՝ ժողովոյն ընդունելութեան ներկայացուի :

ԿՈՆԴԱԿ ՎԵՂ. ԿԱՌՈՒՂԻԿՈՍԻ

ԻՌԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՖ. — Եթէ բաւ կը յիշեմ, Վեհ. Կաթողիկոսի կոնդակին մէջ առաջարկութիւն մը կար, այն է՝ երկու երեսփոխան զըրկել ՚ի Ս. Էջմիածին, մէկն եկեղեցական եւ միւսն աշխարհական:

Ընդհ. ժողովը չկրնար եւ չուզէր մերժել Վեհափառին առաջարկութիւնը. քանի որ խորհրդակցութեան համար պատգամաւոր կուզէ, պէտք է զրկել. եւ թէ եւ այս խնդրոյն որոշումն ընդհ. ժողովոյ մեծագոյն մասին կարօտ է, բայց փափաքելի է ամեն ոք այժմէն իւր կարծիքն յայտնել խնդրոյն վրայ:

Տ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ. — Արովհետեւ Վեհափառին կոնդակին հասնելէն ՚ի վեր բաւական ժամանակ անցած է եւ թերեւս աւոր պարունակութիւնը մոռցուած, պէտք է նորէն կարդացուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդէն կարդացուած ըլլալով, վերստին ընթերցման հարկ չկայ:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Կոնդակն արդէն կարդացուեցաւ եւ ամեն ոք ուշադրութեամբ մտախի ըրաւ զայն, այնպէս որ կարծեմ թէ եւ ոչ մէկ կէտն անգամ մոռցուած է. ուստի ինչպէս իւրեւրեան է՞. յիշեցուց, նոյն կոնդակին եզրակացութեան համեմատ Վեհ. Կաթողիկոս կը պահանջէ երկու սրատգամաւոր զրկել իրեն: Հայրապետին այս պահանջումը կատարելէ չեմք կրնար խոյս տալ. ո՞ր հիտէ, թերեւս այնպիսի բաներ ունի խօսելու զոր զրոյժ անկարելի լինի հազորդել, ինչպէս ինքքն ալ ակնարկած է իւր կոնդակին մէջ: Ուրեմն հօրկ է ժողովոյս վստահութեան արժանի երկու անձ գտնել եւ զրկել Վեհ. Հայրապետին:

Ատենապետ է՞. միւս երեսփոխաններն ալ կը հրաւիրէ կոնդակին վրայ խօսիլ, բայց տեսնելով որ ամեն կողմէ լսութիւն կը տիրէ եւ զեռ եւ Յ երեսփոխանաց ներկայութեան կարօտութիւն կայ մեծագոյն մաս զոյանալու համար, կառաջարկէ Ս. Նախագահին հրաման տալ ատենաւոր գոցելու:

Ս. Նախագահ չհաճիր եւ կառաջարկէ որ գոնէ մեծագոյն մասի խնդրոյն վրայ խօսուի, բայց լուրջութեամբ դարձեալ կը շարունակէ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Վեհ. Կաթողիկոսի

կոնդակին վրայ կրնաք խօսիլ, վասն զի խօսելու շատ նիւթ կայ. ասի հարեւանցի կերպով նկատելի խնդիր մը չէ. բաւական երկար ճամբորդութիւն մը կայ, ճանապարհի ծախք կայ, յարմար անձինք գտնելու դործը կայ, այս պարագաները բաւական ՚իւրթ կը մատակարարեն խօսելու, ինչու չէք խօսիր:

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Սրբազան Հայր, կոնդակի խնդրոյն վրայ կուզեմք խօսիլ, բայց նախ Ձեր Սրբազնութեան կարծիքը գիտել պէտք է մեզ, զի խնդիրը ծանր է: Անոր ըսկըզրոնքին վրայ պէտք է խօսիլ եւ ոչ թէ զրկուելու անձին կամ ճանապարհի ծախուց վրայ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Եթէ զիս զրկելու ըլլաք, ես ճանապարհի ծախք չեմ ուզեր. իմ կարծիքս այն է որ այս պատգամաւորութեան պաշտօն ես երթամ կատարեմ. այս ճամբորդութիւնն առթիւ կըլլայ ինձ Պօսէն երեսու եւ քիչ մը շունչ առնելու, իսկ զալով կոնդակի խնդրոյն, երկու խօսքով կրնամ բացատրել ձեզ անոր իմաստը. Վարչութիւնը Սոյ խնդրոյն առթիւ Վեհ. Կաթողիկոսի զրկած հեռագրոյն ՚ի պատասխան երկար տեղեկագիր մի գրած էր, կերեւ թէ Վեհ. Կաթողիկոսը Վարչութեան տեղեկագրոյն անկեղծութեան չէ վստահացած եւ չէ համոզուած եւ ինչպէս որ ներքէս Սրբազանի նամակէն ալ կրնանամ Վեհ. Կաթողիկոս զեռ տարակուսանաց մէջ կը զբաւորուի այս մասին. անոր համար Պօսէն երկու մարդ ուզած է, որպէս զի բերան առ բերան խօսի, քննէ եւ եղելութեան խորքն իմանայ: Ասկից զատ կան ուրիշ խնդիրներ ալ զորս հիմայ ժամանակը չէ յայտնելու, որոց համար ալ կարելու է պատգամաւորաց երթալը. ուստի պէտք է որ հոս խօսուի այս խնդրոյն վրայ:

(ԴՐՅԷՆԸՆՆԷՆ)

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — (Երեւելու) Կրտսեր եմ որ երեսփոխան է՞ք ինչո՞ւնք կը ճանաչանան լուր եւ մուծ յատելով, ժողովուրդն ալ որ հոս հանդիսատես է, կպստէ լոյս աւելուլ ժողովէն. ուստի կուզեմ լոյս տալ ձեզ մեծ խնդրոյ մը վրայ:

Ինձ այնպէս կը թափ որ Կ. Պօլսոյ Հայ ժողովուրդ մեծ մասամբ նախապաշարուած է բանի մը վրայ, թերեւս Ռուսիոյ Հայ ժողովուրդն ալ, Հայրապետն ալ, նոյն իսկ Պօլսոյ Պատրիարքն ալ նմանապէս նախապաշարուած

են, կարծելով թէ մեծ վիճ մը կայ Հայրապետին եւ Պատրիարքին մէջ, կարծելով թէ քաղաքականութիւն մը կայ որ Հայրապետը հոն եւ Պատրիարքը հոս կաշկանդած եւ անոնց իրարու հետ ունեցած յարաբերութիւնքը խըրարու է: Այս կարծիք շատ սխալ է. եթէ պատմութիւնը ձեռք առնուի, կը տեսնեմք որ մինչեւ 40—50 տարի յառաջ Հայրապետ եւ Պատրիարք փոխադարձ յարաբերութեանց մէջ կը գտնուին եւ իրենց հօտին այցելութիւններ կընեն եղեր. ըսել է թէ այն ատենները շատ աւելի ազատ են եղեր, ինչու հիմա ազատ չպիտի կրնան լինիլ. ես չեմ հաւատար որ քաղաքականութիւնն այսպիսի սրգելք մը զրած ըլլայ, այլ լոկ նախապաշարմունք մ'է այս, որ երկու կողմէն յարաբերութիւննիս կտրեր է. այդ նախապաշարմունքը ջնջել աշխատելու է. եթէ չվերնայ բացուած վիճն աւելի կը մեծնայ. ուստի մեր պարտքն է ուշադրութեան առնուլ եւ քննել թէ այս յարաբերութեանց խղումն այս անջատումն ուսկից ծագած է: Ո՞վ որ է յանցաւորն՝ անոր օձիքը պէտք է բռնելք: Ըստ իս քաղաքականութեան ձեռքն այնչափ զօրաւոր չկրնար ըլլալ որ մինչեւ եկեղեցւոյ մէջ ներգործէ. միթէ Հասուն Գերապոյժառն, որ 60 հազար ժողովուրդ ունի ընդ ամենն եւ որ քանի քանի անգամ Հաովմ գաղեր եկեր է, ինձմէ աւելի ազատ է, եթէ գիտեմ որ ես այս աթոռոյ վրայ անկից նուազ ազատ եմ, այսօրու ընէ կը թողում Պատրիարքական աթոռը: Բայց բնաւ այսպէս չէ խնդիրը, միտիան նախապաշարումն է որ պարաւանդեր է զմեզ եւ կապեր ու կաշկանդեր է: Այս խնդրոյն վրայ զեռ շատ խօսելիք ունիմ, բայց կուզեմ որ դուք ալ խօսիք եւ ձեր կարծիքը բացատրէք:

Տ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ. — Սրբազան Հայր, իրաւունք ունի, ես ալ կը ձայնակցիմ իւր խօսքերուն: Անցեալ տարի թողոքականաց ազգայեան ալ Հայաստանի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը շրջեցաւ իբր յայցելութիւն իւր ժողովրդեան, նա ալ Պատրիարք մը կը համարուի իւր մասին, ինչու ուրեմն մեր Ս. Պատրիարքն արդեւուած մնայ նոյնօրինակ այցելութիւններ ընէ է: Ես չեմ կարծեր որ Բարեխընամ Վառափարութիւնն արգելք լինի մեր Ս. Պատրիարքին իւր հօտին այցելութեան երթալու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Պատրիարքն արդեւուած եմ չըսաւ, ոչ ի հասարակաց այնպիսի կարծիք մ'ունենալը յայտնեց:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Ամենքս ալ գիտեմք եւ այնպէս հաւատացած եմք որ մեր եկեղեցին անկախութիւն ունի. մեր նախնիք այնչափ քաջ էին որ արեւմտ չափ պաշտպանած են մեր եկեղեցւոյ անկախութիւնն. անոնք երբէք ուչ չէին գնէր քաղաքականութեան. եթէ անոնց նկարագիրն ընեմք պէտք է արտասուեմք, բայց նկարագրելու հարկ չկայ որովհետեւ պատմութիւնը մի առ մի կը ցուցնէ մեզ: Ուրեմն մեր պարտքն է պահպանել մեր եկեղեցւոյ անկախութիւնն, եթէ այս դարուս մէջ ուր կրօնից ազատութիւնն հոշակուած է, չը կրնամք պաշտպանել զայն, պատճառը մեր անտարբերութիւնն է. եւ ոչ թէ ակարբութիւնը Մեր Վեհ. Հայրապետը Ռուսաստանի քաղաքներ այցելեց եւ մինչեւ Բեթրպուրկ գնաց, Տաճկաստանի ժողովուրդ զուրկ է նորա ացելութենէն, եւ ինչու համար այսպէս զուրկ մնայ: Ես կը յիշեմ որ երբեմն մինչդեռ Բաղիւշոյ վիճակին առաջնորդական պաշտօնը կը վստիւ շողերոյս Տ. Մատթէոս Սրբազան Կաթողիկոսին կոնդակն եկաւ կարդացուեցաւ փկեղեցւոյ մէջ, ժողովուրդը «բան մը չեմք հասկընար, ըսին, այս չոր կոնդակէն» պէտք է վերջն անձա՞ր գոյ միտիարէ զմեզ մեր կրած նեղութեանց մէջ: Եւ այլ շատ մը խօսքեր յաւելցուցին, զոր կարող չեմ յայտնել: Այս պարագաները կը հաստատեն թէ որչափ հարկ է մեր Կաթողիկոսին անկախ լինիլ եւ թէ որչափ մեասարեր է նորա կաշկանդուած մընալը:

Նոյնը պէտք է բանք նաեւ Կ. Պօլսոյ Պատրիարքին համար. մեր չեմք կրնար ընդունիլ որ Պատրիարք միայն Պօլսոյ առաջնորդն է, այլ եւ առաջնորդաց առաջնորդն է եւ իրաւասութիւն ունի անոնց վրայ, եւ իբր այն պարտի անձա՞ր այցելութիւն ընել գաւառաբնակ ժողովրդեան, անոնց ցաւերը քննել եւ իմանալ: Մեր եկեղեցւոյ, մեր ժողովրդեան իրաւունքն է այս, զոր եթէ չպաշտպանեմք մեծ անտարբերութեան մէջ գտնուած կը լինիմք. երբ մեր ոյժը միացնեմք եւ տամք մեր կրօնական գլուխներուն, նոքա ալ մենէ առած ոյժն յօգուտ եկեղեցւոյ կը գործածեն, բայց զժրադաբար շատ անգամ այդ ոյժը մեք անոնց ձեռքէն կառնուեմք եւ կը ջլտտեմք նո-

ցա զորութիւնը, որով եկեղեցին անպաշտպան կը մնայ. մեք պարտութիւն պահանջել մեր այս իրաւունք՝ Վեհ. կաթողիկոսէն, Նա եթէ մեր ձայնին լսելու արդելքներ եւս ունենայ, մեր ձայն զօրաւոր է միշտ եւ պիտի լսելի ըլլայ հարկաւ, զի ոչ ոք իրաւունք ունի մեր եկեղեցւոյ անկախութիւն կապտելու: Կաղաչեմ ՚ի սէր եկեղեցւոյ եւ ՚ի սէր ժողովրդեան, միաբանութեամբ այս բանին դարմանը հոգալ. ապիկ մտ խնդիր մ'էր որ այսօր բացուեցաւ, պէտք է մեր ուշադրութիւնն այս խնդրոյն վրայ դարձնեմք եւ անտարբերութիւնը մէկդի ձգեմք:

Ուրիշ խնդիր մ'այ կայ՝ որ նոյնպէս ուշադրութեան արժանի ըլլալով հարկ կը համարիմ յիշեցնել, Նրբեմն մեր առաջնորդները զբանքէն տարապարտուց հոս կը բերուին եւ երկար ժամանակ հոս մնալով կը զրկուին իրենց վիճակէն, մինչդեռ ուրիշներ որ եւ է միջոցաւ անպատիժ կը մնան իրենց տեղն. այս ալ մըտածութեան նիւթ մ'է, որուն դարման մը դանել պէտք է:

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՅ.— Կը զարմանամ որ քաղաքականութեան կողմէ մեր Վեհ. կաթողիկոսին վրայ դրուած կաշկանդումներն երեւակայական կը կարծուին, մինչդեռ իրական են, քանզի Վեհ. կաթողիկոս չկրնար հեռանալ իւր վիճակէն առանց կառավարութեան հրաման ընդունելոյ. քանի որ այսպէս է, ըսել է որ իրօք կաշկանդուած է. առկից զատ ՚ի նշպէս կրնամք Վեհ. կաթողիկոսէն օգնութիւն յուսալ, երբ Նա ինքն անկարող կը գտնուի նոյն իսկ Ռուսաստանի Հայ ժողովրդեան յիճակն օրինաւոր բարեկարգութեան մէջ դնելու. ուս-Վեհ. կաթողիկոսին ուղած պատգամաւորները զրկելով ՚ի նշ օգուտ կրնամք սպասել, Այո՛, կաթողիկ Հայոց Պատրիարքը Հոռով երթեւեկեց. բայց ՚ի նշ ըրաւ. իւր ազգին իրաւունքները տարաւ հոն յանձնեց, Եւ այս պատճառաւ հոս խռովութիւններ յարոյց, որ տարիներ տեւեցին, եւ կաթողիկ Հայերը բնաւ չուղեցին օտար երկրի մը մէջ եղող կրօնական գլխոյ դռնի իրենց իրաւունքներն. եւ արդարեւ իրաւացի էր իրենց այս վարմունքը:

Ենթադրելով որ մեր Ս. Պատրիարքն ալ զընաց էջմիածին եւ Վեհ. կաթողիկոսի առաջարկութիւններն Ազգին վնասակար դատելով չընդունեց. ապիկ կաթողիկոսին եւ Պատրիարքին մէջ անհամաձայնութիւն պիտի ծագի:

Իսկ եթէ ընդհակառակն կաթողիկոսին հետ չգտնուի համար Նորա առաջարկութիւնն ՚ի վնաս Ազգին՝ ընդունի, այն ատեն Ազգը պիտի զրգոյնի եւ արտունջ պիտի բառնայ թէ՛ Պատրիարքին եւ թէ՛ կաթողիկոսին դէմ: Եւ այսպէս ո՛ր կողմն ալ դարձեմք, Պատրիարքին երթալը փոխանակ օգուտ մ'ընելու աւելի վնասակար պիտի ըլլայ: Այս նկատմամբ Սրբազան Նախագահին առաջարկութիւնը վտանգաւոր եւ ապարդիւն տեսնելով չեմ կրնար ընդունիլ, եւ կը կարծեմ թէ կարեւորութիւն անգամ չունի:

ՆԱՌԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ.— Պատնասեան էֆի խօսից եթէ չպատասխանեմ, Ժողովուրդն ալ երեսփոխանութիւնն ալ պիտի կայքակոչին: Կը ցուիմ որ իմ առաջարկութեանս իմաստն ազէկ չըմբռնելով ծուռ հետեւութիւններ հանեց, մէկ վայրկեանի մէջ՝ կարծեց թէ Պատրիարք գնաց էջմիածին, ընդունեց կաթողիկոսի առաջարկութիւն, եւ իմ ճանապարհորդութիւնս ՚ի Ս. էջմիածին՝ Հասուն Գերապայքմանին Հոռով երթալ գայուն նմանցուց: Այդ բաղդատութիւնն, այդ կարծիքը բնաւ չհամաձայնիր իմ առաջարկութեանս նոյառակին. կը խնդրեմ որ լաւ ուշադրութիւն ընէք իմ խօսքերուս:

Պատրիարք այնչափ անկախ չէ որ՝ երբ բանակցութեան համար էջմիածին ներթայ՝ կարող լինի Ազգին իրաւունքները ծախել եւ ետ դառնալ, Պատնասեան էֆ. ՚ի ըսածին պէս՝ եթէ մեր Հայրապետն իրօք կաշկանդուած է, որո՞ւ է յանցանքը, ի՞նչ է թէ քաղաքականութեան. եւ եթէ ստուգիւ կաշկանդուած է, ՚ի նշու չը ըողոքէր եւ աղաղակ չբառնար: Ես չեմ մեղադրեր Ռուսիոյ քաղաքականութիւնն, իբրեւ թէ ծանր շղթայ մը դրած լինի մեր Հայրապետի վրը: Այդ շղթան Պալ-է-է-է է՝ պիտի ըսէք, այնպէս չէ՞ մի. թող Պատրիարքին ալ այդպիսի կապ մը տան, տեսնեմք պիտի ընդունի: Բայց ո՞չ ապաքէն նոյն իսկ Պալ-է-է-է գրութեամբ Ռուսիոյ Տէրութիւնը հրաման տուած է Վեհ. կաթողիկոսին երեք չորս ամիս իւր սեպհական վիճակներն այցելել. մի-թէ Տաճկաստանի համար երբ այդպիսի հրաման մը խնդրուի պիտի զլանայ. ես այնպէս կը հաւատամ որ եթէ Վեհ. կաթողիկոսի կողմէ առաջարկութիւն մը լինի Ռուսիոյ կառավարութեան, անլսելի չմնար. եւ ՚ի նշու թոյլ չտայ, մի-թէ Ռուսիոյ կառավարութիւնը չգի-

տէ՛ր թէ կաթողիկոսի ճանապարհորդութիւնն օգտակար է նաեւ իրեն համար եւ չէ թէ վնասակար:

Տ. ՄԱՏԹԷՆՍ ՎՐԴ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Խնդիրն երկու պատգամաւոր զրկելու վրայ է, ինչպէս որ Վեհ. կաթողիկոսն իւր կոնդակաւ կը խընդրէ. ասոր մէջ ոչ Պատրիարքին էջմիածին երթալու եւ ոչ կաթողիկոսին հոս գալու խնդիր կայ. այս նկատմամբ հարկ չեմ տեսներ կաթողիկոսին կաշկանդուած ըլլալը կամ չըլլալը խնդրոյ տակ դնել, որովհետեւ յարաբերութեանց խնդրոյն յուզուած ատեն հարկաւ այդ խնդիրները պիտի երեւան ելնեն, ինչպէս նաեւ Պալատէնիայի խնդիրն իսկ Վեհ. կաթողիկոսի կոնդակին գալով որովհետեւ Սոյ կաթողիկոսական խնդրոյն պատճառաւ եկած է այս կոնդակն եւ արդէն Սոյ խնդիրն ալ վերջացած է ընդհ. Ժողովոյ համար, մեր ընելիքն ուրիշ բան չէ, կարծեմ, բայց եթէ որոշել թէ՛ Վեհ. կաթողիկոսին մարդ զրկել պէ՛տք է թէ ոչ, եւ ՚ի նշ պայմաններով. այս է ըստ իս խնդրոյն ամբողջութիւնը:


ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՅ.— Կը տեսնեմ որ դարձեալ Սոյ խնդիր կեղնէ, Սոյ խնդրոյն մէջ հետեւանաց (consequences) համեմատ չվարուեցանք, եթէ Սոյ աթոռն էջմիածնի հպատակ կը ճանչէինք, պէտք էր Վեհ. կաթողիկոսին զիմէինք. քանի որ այս չըրինք, ըսել է թէ անկախ ճանչցանք Սոյ աթոռը. պէտք է չընդունիմք ուրեմն էջմիածնայ կաթողիկոսին միջամտութիւնն եւ ըսեմք իրեն թէ՛ պատմութիւնը Սոյ աթոռ մը ձգեր է մեզ, եթէ դու չես ճանչեր՝ հոգ չէ, մեք կը ճանչեմք: Ուստի այս խնդիրը նորէն յուզել վտանգաւոր է. երկու աթոռոց մէջ հակառակութիւն ձգած

պիտի ըլլամք. եթէ տրամաբանօրէն գործել ուզեմք՝ պէտք է ըսել Վեհ. կաթողիկոսին որ մեք պատգամաւոր չեմք զրկեր. դու կրնաս Սոյ կաթողիկոսին հետ բանակցիլ եւ այնպէս ընել որ նա իւր հնազանդութիւնը ցոյց տայ քեզ:

Տ. ՄԱՏԹԷՆՍ ՎՐԴ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Պատնասեան էֆ. կըսէ թէ ընդհ. Ժողովը Սոյ կաթողիկոսի ընտրութիւնը վաւերացնելով նոյն աթոռն անկախ ճանչեց էջմիածնայ աթոռէն. բայց կը յիշեցնեմ թէ ընդհ. Ժողովն էր դարձեալ որ յարաբերութեանց որոշման համար Յանձնաժողով մը կազմեց. ըսել է թէ անկախ ճանչած չէ Սոյ աթոռն, եւ տարակոյս չկայ թէ յարաբերութեանց խնդրոյն մէջ էջմիածնայ կաթողիկոսին հետ պիտի բանակցի: Սակայն էջմիածնայ կաթողիկոսն այսօր տեսնելով որ իր աթոռոյն Եպիսկոպոսներէն մին Սոյ աթոռը բարձրացեր է, կը հարցնէ թէ ինչո՞ւ ուխտդ մոռցար. Մկրտիչ Սրբազանին կիցար, եթէ իւր ուխտն իրօք դրժած է՝ ինչպէս կըսէ Վեհ. կաթողիկոսը. կանխաւ բանակցիլ Նորին Վեհափառութեան հետ. կարծեմ թէ մեք չեմք կրնար սակից անդին անցնիլ, վասն զի արձանագրութիւնը մեզ դէմ կը բողոքեն:

Ատենապետ էֆէնտիի առաջարկութեամբ քառորդ մը դադար կը տրուի Ժողովոյն ժամը 9 ին. բայց արդէն Ժողովոյ մեծադոյն մաս չունենալուն եւ ներկայ երեսփոխանաց ալ մէկ կողմէ մեկնելուն պատճառաւ այլ եւս ատեն չբացուիր:

ՓՈՒ. ԱՏԵՆԱՊԵՏ
Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ
ԱՏԵՆԱՎՊԻՐ
Յ. Հ. ՄԷՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի , և կը գտնուի
Եկեղեցեաց բանկաները ,